

Համբառնայր սուրբ Աւետարանն, և ըզմարգարէական և զառաքելական զիրան ընթեռնելով, ընթերցեալ լինէր ապա Աւետարան, և ապա բարձր ձայնիւ խոստովանէին զՀանգանակն Հաւատոյ՝ տրւեալն Արկեղեցւոյ ի Վիկիական ժողովոյն:

Աստի ուրեմն իմանալք, եթէ Ժամամուտն ասացեալ պաշտամունք յետոյ ուրեմն քան զԼամստասէրն կարգեալք են յԱրկեղեցւոջ մերում ի սկիզբն պաշտաման Պատարազի նախ քան զՄեսեղին Սարգս:

Իսկ եթէ Պատարազն անձայն պաշտիւր առ մեզ ի Հնուամն, յայտ ի յետագայիցն է ապաքէն յեկեղեցական անցից յերեքտասաներորդ դարու. յորոց վերայ վէճ և տարաձայնութիւնք ծագեցան ոչ սակաւ:

Այսպիսի ինչ ներածութիւնս բաւական Համարեցուք իբր ի յառաջարան Պատմութեան Ժողովոց Հայաստանեայց Արկեղեցւոյ, կարևորացն վասն ազդիս ընդհանուր եկեղեցականաց և ժողովրդոց, որոց ի հոգևոր պէտս կատարման ընդառաջ լինին հարկաւորութիւնք եկեղեցական կանոնաց և հարկ տեղեկութեան վասն որպիսի պատճառաց նոցին զրութեանցն կանոնաց:

Ե. Արեւելեակոսոս.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ.

(ՏՐԼ ԳԵՂ):

ՉՊՊԱՅ (ԿԵՆ).

Հայկեան պատմութեան մէջ այնքան նշանաւոր և փառաւոր տեղ զբաւոյ Հոչակաւոր, Հինօրեայ և փարթաւ քաղաքն Հայոց, Արասի գետի եղերքին, Արնջակ և Պողթն դաւառաց սահմանուկցութեան մէջ, որ և ամեն դարուց մէջ զլիովն անցած անցքերովն, կամ մեծագործ և անուանի բնակչաց համբաւովն ամենի հետաքրքրութիւնն և ակնածութիւնն կշարժէ:

Այս տեղ ձեռնադրեց Բարդուղիմէոս առաքեալն իւր Ամսի աշակերտն յԱպիսկոպոսութիւն Պողթան. այս տեղէն յառաջ եկին այնքան նշանաւոր մարդիկ, որոց ոմանք իւրեանց նիւթական կարողութեամբն մեծամեծ ձեռնարկների մէջ սխրացան, և ոմանք ազգային հանրական գործերի մէջ փայլեցան: Այս տեղ այնքան ծաղկեցաւ և զարգացաւ վաճառականութիւնն, որ Շահաբբասայ հեռատեսութիւնը զրդելով յամի 1605 անինայ տանջանօք և չարաչար տառապակրութեամբ գաղթել տուաւ բնակիչքը միւս գաղթեալներէն զատ, Պարսկաստանի մէջ սոցա ձեռօք առուտունն ծաղկեցնելու համար: Բուն Չուղայեցւոց շառաւիղք էին և մեծանուն իշխանքն Աղարեանք ի Ռուսաստան: Այլ փածնի շինութեանց շատերը դեռ մինչև այսօր

Ջուղայեցւոց յիշատակներովը կիտային, և ին. և ին:

Այժմու նորաշէն Ջուղայն, որ հնէն վերստ մի հնուացած է, կբաղկանայ յիտնաչափ Հայ գերդաստաններէ, և կանկանի դարձեալ Արասխայ հիւսիսեզքը, լեռներով երկու կողմէն շրջապատուած զիւր տեղ մի. բնակիչքն ըստ մեծի մասին գաղթականք են, իսկ փոքր մասն ինչպէս իրանք կասեն, մնացորդ են առաջնոցն, որոնք զաղթելու միջոցն եօթն տան չափ կարողացած են հնար գտնել ազատուելու, և այժմ բաւական բազմացած են. սոցա լեզուն միանգամայն կտարբերի եկաց և Ասիսիջեանի կամ Արեանայ բարբառէն զօ. « երթամամ, երթամաս, երթամայ, երթամանք, երթամաք, երթաման. ասուամամ, ասուամաս, ասուամայ, ասուամանք, ասուամաք, ասուաման, և ին: Սոցա ասելովն, իրանց մէջն զեռ կան շառաւիղք Խօջայ Խաչիկի, հովանւոյն Ազարեան տոհմի:

Ս. Գէորգ.

Նոր շինուած զիւղի հիւսիսային ծայրին է այս եկեղեցին յանուն Ս. Գէորգայ, հին Ս. Գէորգ եկեղեցւոյ պատուոյ համար, որոյ աւերակներն առաջին Ջուղայի մէջն են. շինութիւնն հասարակ և անշուք, տանիքն փայտածածք, աւազանի առաջի պատին մէջ ազուցած մարմարեայ քար մի կայ հնէն փոխադրուած այս տեղ, որոյ վերայ վերտողած է «Սուրբ աւազանս յիշատակ է Սիսիթարի որդի Ովանէսին ի յարկս Սրբոյն Գէորգեայ զօրավարին ի թուին ՌՃՂՁ»:

Սուրբ Աստուածածին.

Հարաւակողմն զիւղիս Արասխի վերայ շինուած է եղել չորս ամրապինտ կամարի վերայ կամուրջ մեծ և ընդարձակ կոփածոյ քարամբք. իսկ այժմ միայն չորս սիւներն կմնան կանգուն: Այս կամրջի շինութիւնն աւանդութիւնն կղժուարանար որոշ ժամանակի և անձին տալ. միայն նորա կործանումն կտայ ընչաւէտ պառակնոջ մի, որ եօթն տարուան հին քացակ վերան լցնելով քանդել է:

Սուրբ Աստուածածին.

Այժմու զիւղի արեւմտակողմն, և նորան կից՝ է աւերակն եկեղեցւոյն յանուն Տիրամօրն, որոյ արեւմտեան որմն մնայ կանգուն, կօփածոյ կարմիր քարամբք գեղեցկաշէն. եկեղեցւոյ չորս կողմն է գերեզմանատուն. զերեզմանաց շաք հին, որոնք զարդարուած են նուրբ փորագրած մեծամեծ կանգուն խաչքարերով. միայն մէկի այս թուականն՝ որ բոլորի մէջ հինն երեւցաւ, կառնուիք այս տեղ. Խաչի քառաթեթի միջոցները զրուած էր «^թ/_Թ», և ստորե «Սուրբ Խաչս յիշատակ Արդաշէն, Աստաթին, Խաթունին հոգուն»:

Աստուածածնի հիւսիսակողմն Արասխի եզրին բարձրացած բլրակի զազաթին կան կիսաւեր մնացորդք բազմաթիւ քարուկիր շինութեանց — սենեկաց և պարբուպաց, որոց մէջ է և մատուռ մի այլ՝ փոքրիկ, քարաշէն, թաղակապ և անվնաս, դարձեալ Տիրամօր անուամբ, որ ունի և սեղան փոքրիկ: Գրան հիւսիսակողմն արտաքուստ որմոյն մէջ հաստատած մեծ խաչքարի մի վերայ վերտողած է «Աստուած ողորմի Աղամալն», միւսներն

եղծեալ. սորա աջակողմն փոքրիկ խաչ-
քարի մի վերայ « Խաչս յիշատակ է
Մկրտչին Աստուած թվ .
Ո՛ւ . . . սեղանոյ ձախ սեան վերայ գրու-
ած խաչքարի վերայ « Խաչս յիշատակ
Սահակին », թուականն եղծեալ : Մատ-
րան արևելակողմն գտնուող միապաղաղ
ընդարձակ ժայռը կը ըջապատէ քարաշէն,
ամուր և բարձր պարիսպ, որոց համար
կասեն « Աստուածածնի բաղ », բայց հա-
ւանական չէ բնաւ ապառաժ բլրակի զբլ-
խին այգւոյ, որքան ժամանակին պատըս-
պարանք լինելն :

Աստուածածնի արևմտակողմն միապա-
ղաղ բարձրացած լեռան գլխին կան դեռ
մնացորդք կիսաւեր պարսպաց, զոր կա-
նուանեն « Զուղայու բերդ », կամ
« Գարվաղերի գլխի բերդ », որ յիրաւի
անմատչելի պատսպարան մի եղած է ժա-
մանակաւ. « Գարվաղայ », կասուի բեր-
դի և Արասխի մէջ տեղն փակող բարձր
պարսպաւոր դարբանն, որով փակուած
է եղել դէպ ի բուն Զուղայն տանող
ձանապարհն. այժմ սորա աւեր մնա-
ցորդքն կնշմարուին : Մեծ գարբասիս
կամ դրանս առաջովն Արասխի մէջ կայ
այժմ մեծ բեկոր ժայռի, և նորա գլխին
կոփածոյ քարամբք կանգնած շինութեան
նշխարք, սա ինք է, որ բնակչաց մէջ
կասուի « Շահ-թախթը », և տեղական
աւանդութիւնն կպատմէ որ սորա մէջ
(շինուածոյն) Խոջայ Խաչիկն Շահաբ-
բասը մեծարելով հացկերութիւ, հաներ
է ի սպաս ոսկի խաղող, ոսկի խնձոր և
հաւկիթ, ու այլ տեսակ արուեստաշէն
ոսկինիւթ մրդեղէններ, Շահաբբասն
նախ բնականն կարծելով ձևոտ է պար-

զեր դէպ ի խաղողն, բայց երբոր իւր վե-
զերի ազգարարութեամբն կհասկանայ ա-
րած սխալն, զարմացած այսքան փարթա-
մութեան և յառաջադիմութեան վերայ,
միտքը կընէ դաղթեցնել Զուղայեցիքը,
ինչպէս և արար : Շահ-թախթի գտնուած
տեղն Արասխայ ջրոյ պտոյտ առնելու
պաածառաւ կկոչուի « Պատան », նոյն
աւանդութիւնն կասէ դարձեալ, թէ
Զուղայեցւոց դաղթած ժամանակը Շահ-
աբբասի հրամանաւ, յիշատակեալ Աս-
տուածածնի բանալիքը ձգած են այս
Պատանի մէջ, նշան որ Զուղայեցիք
մտքներէն հանեն միւսանդամ նորա դու-
ռն բանալն : Շահ թախթէն քառորդ
վերտ հեռաւորութեամբ Արասխայ հիւ-
սիսային եղերքը տարածուած երկայնա-
ձիգ հովանի մէջ կանկանին բուն Զու-
ղայի աւերակներն, այցելուի դառն զգաց-
մունքը շարժողներն, բոլորն քարուկիր,
և շատերն փառաւոր շինուածոց նշխարք,
ինչպէս շքեղ եկեղեցեաց, մեծամեծ
տանց, ընդարձակ կսրաւանոցի, և ին :
Աւերակացս հանդէպն Արասխայ միւս
եղեր վերայ է ամայն բայց ընդարձակ և
քարաշէն կարաւանոց (քարվանսարայ)
նախնի մեծափարթամ կարաւանի իջեա-
նը. նորա մօտն և եկեղեցի մի, զոր « Գը-
ռանկի », կանուանեն բնակիչքն : Այսպի-
սի մի եկեղեցի ևս « Գռանկի », ասացեալ
Զուղայի աւերակաց մէջն է :

Ինն գլխի Կանապարհն Զուղայու . . .

Բուն գլխի արևմտակողմն, Արասխայ
հիւսիսային եղերքին կանկանի գերեզմա-
նատունն, Զուղայու երբեմնին բաղմա-
մարդ, ծաղկեալ և նախանձելի գրութեան

և վիճակին յաւերժական քարոզ, և աշխարհիս սքանչելի տեսարաններէն մինն: Արբոր առաջին անգամ մարդոյ հայեացքը ընկնի այս տեղի վերայ, անշուշտ պիտի սոսկայ և կարծէ որ բազմաթիւ զօրք սպառազինուած կանգնած են Արասխայ փրփրադէզ ալեաց հետ պատերազմելու. վասն զի անթիւ են մեծամեծ ու կանգուն խաչքարերն, սփռած ընդարձակ լեռնոտի երեսին. (դեռ շատերն հնութեան երեսէն խախտուել կործանուել են). վահ, սիրելի ընթերցող, չպիտի կարողանամք եզ համոզել լաւապէս թէ մարդ յիրաւի կափշի կշուարի միանգամայն, տեսնելով այսքան գերօրինակ կասարելագործուած և սքանչելարուեստ նուրբ քանդակաղրութիւնները*):

Հիացմամբ մեծաւ և տխուր զգացմամբ պատելով մէջներն, հարկ համարեցի եօթնի չափ միայն տապանագիր առնելու. առաջինը քաղաքապետին տեղւոյս Խօջայ Խաչիկայ, որոյ համար բնակիչք պատմեցին լինել հաւն Ազգարեան տոհմին: Մատուռն որ կանգնած էր աճիւնացած մարտնոյ վերայ, ունէր միջակէտին գեղաքանդակ բարձր խաչքար, որոյ բուն վերին ծայրի վերայ երկու անջատ տողերով գրուած «Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ և անուանի քաղաքապետ Խաւջայ Խաչիկին որ ի Ռ՝Օ՝Գ՝ թուականիս հանգեաւ առ Քրիստոս», իսկ խաչի պատուանդանի վերայ «Խաչս յի-

(*) 1871 թուականին այս Խաչքարերէն չորս հատ որոշուած բերուեցան Նախիջևան քաղաք, անտի Տիփիս աբբունի թանգարանը հասուցանելու համար:

շատակ Խաւջայ Խաչիկին և կողակից Մարիամին,,:

Բ. «Խաչս յիշատակ է Մարիֆարին հոգւոյն թ. Ռ՝Ն՝Գ՝,,:

Գ. Խաչքարի վերին ճակատին «Սիրական Գրիգոր թ. Ռ՝Ն՝Թ՝,, և պատուանդանին «Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս մանուկ Գրիգորին թ. Ռ՝Ն՝Թ՝,,:

Դ. «Թ. Ռ՝Ն՝Թ՝ խաչս յիշատակ է Գուհարի հոգուն,,:

Ե. «Սուրբ խաչս յիշատակ է Աստուածատուրին թ. Ռ՝Ն՝. Իէլ — կզզ,,:

Զ. «Սուրբ խաչս յիշատակ է Աւետիկին. թ՝Վ՝ն Ռ՝Ն՝Օ՝,,:

Է. «Ի թ՝Վ՝նս Ռ՝Ն՝Գ՝ սը խաչս բարեխոս առ Քրս Աերանին հոգուն,,:

Այս գերեզմանատան ստորերը հարուակողմն, Արասխայ բուն ափին է մեծ և գեղեցկաշէն բաղանիք. իսկ արեւելակողմն, մնացորդք կոփածոյ քարամբք և կրով կառուցեալ ջրաղացի: — Այսքան բազմաթիւ գերեզմաններն, յիրաւի կարգաբացնեն այն աւանդութիւնն, որ հին Ջուղայի բնակիչքը կզնէ տասներկու հազար. և Հաճարբասի տարած գողթականների թիւը կհամարէ քառասուն հազար:

Սուրբի հաթ Կար.

Գերեզմանատան արեւմտակողմն լերան զառիվայր ստորոտին դէպ ի վեր Ամենափրկչի վանքը տանող ճանապարհի աջոյ թևի վերայ կայ փոքրիկ կարկառ մի քարանց «Սուրբի Մամի քար,, ասացեալ. աւանդութիւնն կպատմէ որ կուղիկ պառաւ մի Ամենափրկչի վանուց մարկորաներէն սօխ գողացած լինելով, այս տեղ

հասած կքարանայ. հեղեղատն ևս՝ որ նորա քովէն կանցնի, կասուի «Առաջիկ Մամի չայ», :

Ամենափրկիչ.

Գերեզմանատան արևելակողմն, բարձր լեռան մի գագաթին է քարուկիր և ամուր շինութիւն միջակադիր մատրան մի՝ որ կոչի «Ամենափրկիչ», կամ «Ամենափրկչի վանք», . շինուածն համակ կոփածոյ քարով է և կամարակապ. ունի փոքրիկ կաթուղիկէ, սեղան մի, և երկու խորան, և դուռն մի բարձր և լայն. մէջ տաճարին սպիտակ սուղաղած. դրան աջակողմն գտնուած խաչքարի մի վերայ վերտողած է «Սուրբ Խաչս բարեխօս առ Քրիստոս փրկութեան թէոդոսին թ. ՈՒԽԳ», . միւս ևս խաչքարի վերայ «Խաչս յիշատակ է Խօջայ Էպրուով, Խօջայ ջան աղա բէկին (երկու տողն անորոշելի) խօջայ Աաղար բէկի թ. ՈՒԽԳ», :

Ունի մենաստանս արևմտակողմն և դաւիթ փոքրիկ, բայց վայելուչ, երկու սեանց վերայ թաղ տուած, որոյ մէկ երկու տեղն այժմ քայքայեալ: Տաճարի չարս կողմն քաշուած է պարիսպ բարձր և ամուր, քարուկիր շինութեամբ, որ մէջ առած է արևմտակողմի կամարակապ քարաշէն խցերն կրօնաւորաց, և միւս կողմերի շէնքերը, փռատուն, հացստուն, ամբար, և այլ զանազան մեծ ու փոքր սենեակները բոլորն քարուկիր շինութիւն:

Աւանդութիւնն կասէ որ Ջուղայեցոց զաղթած ժամանակը Շահաբբասն նոցա սիրտն զրաւելլու, մանաւանդ թէ խնդիրներն յարդեղու համար այս Ամենափրկիչ վանքի հողէն և քարերէն (ինչպէս և Էջ

միածնի) տանել տայով ուղտերով Ապահան, այն տեղ մի և նոյն անուամբ վանք շինել տուած է, և այս այն Ամենափրկիչ վանքն է Նոր Ջուղայի, ուր կնստի տեղոյն Առաջնորդն. և այդ վանքին միայն Շահաբբասն ի շնորհուկս Ջուղայեցոց իրաւունք տուած է զանգակ հարկանել:

Տաճարի և հարաւային պարսպի մէջ տեղ կար մահաբձան մի փառաւոր — զեղաքանդակ խաչքար. բայց զրերն մաշուած էին զրեթէ խապառ. նոյն պարսպի արտաքին ճակատի վերայ երեք տեղ կային մի մի փոքրիկ խաչքարինք և ունէին յիշատակարան, բայց բարձր լինելուն, և մեր հնար չունենալուն համար, բաց ի այս խօսքերս «խաչս յիշատ», դժուարացանք ուրիշ բան մի որոշել. ուստի և կրթողումք ուրիշ հնասիրի աշխատութեանը: Փոքր ինչ անջատ հարաւային պարսպէն, արտաքուստ կանգնած էր մեծ և հին խաչքար մի, որոյ ճակատին զրուած «Աննգնեցաւ խաչս բարեխօս Եզնատիոս ար. . ինին թ. ՋՂԱՆ», . նոյն հարաւային պարսպի տակն սփռած են մնացորդք աւերակաց, բոլորն քարաշէն, և դոցաները բազմաթիւ գերեզմանք՝ որոց շատերը գեռ կանգուն կպահին չքնաղ և փառաւոր և մեծամեծ խաչքարերը: Այս գերեզմանատան մէջ ևս գէղ ի արևելեան հարաւակողմն կանգնած կան քանի մի հատ թաղակապ քարաշէն մատուռներ, (մի քանին աւեր), կրելով իւրեանց ճոցին խաղաղացած մարմնոց շիրիմներ: Այս գերեզմանատունն բոլորն վանուցս միաբանիցն է, և եպիսկոպոսաց ու վարդապետաց շիրմաց շատերի վերայ մահաբ-

ձանների — սքանչելարուեստ փորագրած մեծամեծ խաչքարերի վերայ նկարուած է պատկեր կրօնաւորական, փիլոն վերան և կնդուզն գլխին: Գոցա մէկի վերայ արձանագրած էր « Խաչս յիշատակ Սաթէ- ոսին և Տնողացն Թանդոսին . . . թ. 916 », երկրորդի մի վերայ « Կանդնե- ցի Ս. Խաչս փրկութեան հոգւոյ աէր Հայ- րապետ եպիսկոպոսին և իւր Տնողաց թ. 917 », երրորդի մի վերայ « Խաչս յի- շատակ է Խաչատուր արեղին վարդապետին տէր Պետրոսին և Տնողաց Սերուրին Ար- տունին թ. 918 », չորրորդի մի վերայ « Խաչս յիշատակ Սանուէլ արեղին թ. 919 », կային և շատերը, որոնք սոցա նէ աւելի զարմացուցին էին իւրեանց հնութեամբն և ճարտարարուեստ փո- րագրութեամբ, բայց ափսոս անվերծա- նելի մնացին մաշուած արձանագրերն: Արեւմտակողմն գերեզմանատանս կրղնէ աղբիւր մի համեղաջուր՝ շրջապատուած կանաչասաղարթ ծառերով, այս ծառերն բնակիչք Զուղայի կկոչեն « Ղանքի բաղ- չայ », և կասեն ո՞վ որ ձեռն տայ այդ ծա- ւերին՝ կպատժուի: Այս աղբիւր ջուրն լերան մէջէն հատեալ անցքովն, խողո- վակներով տարած է Արասխայ հարա- ւային եզերքին տարածուած, վանքի այ գին ուողելու. այգւոյ ցանկի մնացորդքն միայն կտեսնուին այժմ. իսկ անուն այգ- ւոյս բնակիչք կտան « Ղանքի ծակուտայ բաղ », ջրանցքի անունէն առած:

Զուղայի հանդէպն և մօտն է « Գար- րուղաղ », կոչեցեալ բարձր և ընդարձա- կանիստ լեռան, ուստի դուրս կգայ ընտիր ջրաղացաբար, որոյ վերայ գլխաւոր աշ- խատողներն Զուղայեցիք են:

Զամալիքի նոր.

Զուղայէն երկու ժամու ճանապարհ հեռի դէպ ի հիւսիս կանկանի այս գիւղն, զիւր տեղւոյ վերայ, բնակութիւն քա- ռասնաչափ Մահմետական գերդաստա- նաց, որոնք կպարապեն երկրագործու- թեամբ, բայց աղքատ են և սակաւաշ- խատ: Այս գիւղես մօտն է « Ալե-Մա- մատ », կոչուած նուիրական ձորակը, որոյ մէջ կան սուրբ համարուած ծառեր, ուր զոհիւք ուխտի և երկրպագութեան կգան Զամալիքեցիք. և այդ ծառերի մէկ ծի- ղին անգամ ձեռն տալ Համարձակին: Հին Զամալիքին նորի արեւելակողմն է հինգ վերստ հեռաւորութեամբ, ուր կան շատ աւերակներ, որոց մէջ և մնացորդք թաղակապ քարաշէն բաղանեաց:

Գլղճա.

Հին Զամալիքի արեւելակողմն և սահ- մանակից, Արնջակ գետի վերայ ձուած փոքրիկ գիւղ մի է, մօտ ժամանակի հաս- տատած բնակութիւն տասնութն տան, որոց երկուքն Հայ, մնացածն Մահմետա- կան. զիւղես հարաւակողմն կտարածուին ընդարձակ լեռիք և բլուրք, ուստի կելա- նէ ջրաղացաբար: Անունս « Գլղճա », առնուած է հարաւակողման բլրակայ հողե կարմրութենէն: Գիւղես արեւմտա- կողմն՝ Արնջակ գետի ափին է վէմ մի մեծ « Ղանաբար », ասացեալ, և ինչպէս կերևի սահմանադուրս եղած է Ս. Կա- րապետի կալուածոց:

Արալն.

Ապրակունիսի արեւմտակողմն վեց վերստ հեռի կանկանի այս աղքատ գիւղ, բնա-

կութիւն վաթսուն գերդաստանաց, որոց կէսն Թուրք. Զայք գաղթականք են Պարսկաստանի և ունին փոքրիկ անշուք եկեղեցի մի: Ըտտ արդասաւոր է այս գիւղն հողը, և բնակիչք նշանաւոր են մրգաստան (բօստան) մշակելու մէջը:

Կղնուս.

Արտղնի հիւսիսային արեւմտակողմն կէս ժամ հեռի կանկանի այս գիւղ բնակութիւն երկհարիւրաչափ գաղթական Զայ գերդաստանոց. խիստ արդաւանգ է նոյնպէս և տեղւոյս հողը, բայց ջրոյ սակաւութեան պատճառաւ չի կարող աշխատասէր բնակչաց աւելի միջոց տալ վաստակելու, որք ընդհանրապէս ժրջան են, ջերմեռանդ և հաւատաշատ, միենոյն ժամանակ և խիստ նոխապաշարեալք և արբեցողք, և զլիաւոր ըմպելին սոցա Պողթան գաւառի թթի օղին է. մէջընին կան բաւական հարուստ գերդաստանք, և շատերը կպարապեն նաև առևտրով. ունին եկեղեցի մի հասարակ փայտածածք: 1871 թուականի խօրհրայով այս տեղ մեռան եօթանասուն անձինք:

Խաչափարախ.

Ապրակունիսէն ժամու կիսոյ ճանապարհ հեռի գէպի հիւսիս թերակղզւոյ պէս երեք կողմէն լեռներով և բլուրներով շրջապատուած ընդարձակ դաշտի մի մէջ շինուած է այս գիւղն, բնակարանք առասուճ տան Մահմետականաց, որոնք կպարապին տուարածութեամբ և երկրագործութեամբ. հին Խաչափարախը նորի արեւմտակողմն, երեք վերստ հեռու կանկանի, պահելով ցարդ բաղմաթիւ շի-

նուածոց աւերակներն. և երեի թէ ջրոյ նուազութեան պատճառաւ անմարդացած է. նոր գիւղն ունի աղբիւր մի, որոյ ջուրն ժողովուելով լճակի մէջ գործ կը զրուի ըստ պիտոյից. գիւղն մէջ տեղ կանգնած է հողաշէն բուրգ մի որ շատ հին չիլի. այս տեղէն մտիկ տուողին չքնաղ տեսպան կրնճային Մատեաց սպիտակափառ գաղաթը, և Խաչափառանի այգեստանեայք: Անունս «Խաչափարախ», խաչ և փարախ բառերը արասանելով, գուցէ ունի իւր մէջ Զայ կանքի կամ անցքի մի այժմ անյայտացած յիշատակարան: Ասած լինելով որ այս կողմերի Մահմետականաց աչքին ախնածելի և նուիրական ուխտատեղ մի կայ «Ասարի—քեար», անունով, կամեցայ տեսնել. ուղղելով ձիոց ընթացքը գէպի արևելք, և չափելով բլուրներն ու ձորակներն, հանդիպեցանք փոքրիկ բլրակի մի, որոյ վերայ կար ահագին քարակոյտ, և նորա մէջ բուսած դժնիկ ծառ մի կարճահասակ, գոյնզգոյն հանդերձից կտորներով ծանրաբեռնած. հարցմունք արած ժամանակս լսեցի անդական աւանդութիւնն թէ սա ձգնաւորաց շան գերեզման է. երեք սուրբ մարդիկ փախչելով Անկիթամուրի ասպատակաւորաց երեսէն, ամրացած են սուրբ այրին մէջ (որոյ համար պիտի խօսինք). իսկ նոցա արգար շունն փնալով այս տեղ, սպանուել է և թաղուել, որ մինչև ցայժմ ցոյց տուած է և ցոյց կտայ զօրութիւններ, մանաւանդ ջերմ և տենդ փարատելովն. իսկ այն դժնիկ ծառն, որ կայ այժմ, առժամայն բուսած է արեւն թափած տեղն: Այս տեղէն փոքր մի գէպի վեր բարձրանալով երկայնաւ անձուկ

հովտի հանդիպեցանք, երկու կողմէն միապաղաղ ահաբեկ ժայռերով շրջապատւած, այս է դէպ ի յիշատակեալ ուխտատեղին տանող ճանապարհն, որոյ վերայ շատ տեղ տեսանք կիսաւեր որմունք, և ի տեղիս տեղիս շուք ընծայող կանաչազարդ թթինիք և սօսիք, բաւական ուղի հատանելով հովտիս միջովն տեսնք յանկարծ սարսափելի այրեր և խոռոչներ, ուր տեղ և դադար առինք, ձախ թևոյ վերայ կար քարաշէն պատ մի, որ կշրջապատէր բարձր ժայռին մէկ խոռոչը, ունելով դուռն մի, մահնք հեաքբքբութեամբ ի ներս և տեսնք թաղակապ փոքրիկ պատուհան մի երեք կանգուն բարձրութեամբ և երկու լայնութեամբ, միջը աղուցած հաւասարաչափ մարմարեայ քար զեղեցիկ վերտողած Պարսկերէն լեզուաւ, որ Պարսիկ ախուճախի մի ասելովն Ղուրանի մէջէն բերած հատածներ է. գուցէ անձնասիրութիւնն ստիպած լինի տգէտ ախուճախն ինձ այդ ասելու, բայց ես չկարացի կարդալ, և ոչ օրինակել, որովհետև օրն տարածամ էր. նորա մօտ դեպինը ընկած կային և երկու կիսարէկ քարինք, նոյնպէս Պարսկերէն արձանագրութեամբ. այս տեղ ամրացած և պատսպարուած են յիշեալ երեք ճրգնատուն անձինքն, որք ըստ աւանդութեանն երեք հարիւր տարի շարունակ քնած մնալն յետոյ, զարթնել զնացել են քաղաքը և հարցրել իրանց վաղանցիկ ծանօթները: Ասն և սորա հիւսիսակողմն ուրիշ այրեր, որք ունին նմանապէս և ուրիշ նու իրական նշանակութիւններ. սոցա մէկի մօտ թանկիւնին միջ տանիքէն ժողոված ջուր կկաթի այնքան նուազ և

ծանր, որ հազիւ ժամ մի ներքեր կանդնողի վրէն ընկնի կաթ մի, այս պատճառաւ առել է այլ նշանակութիւն. « Ով որ սրտին խորհուրդ ունենայ, կասն տեղացիք, կերթայ այս կաթանքի տակ կը կանգնի. եթէ ջուրը կաթեց վրան, ասել է որ խորհուրդը կկատարուի, »:

ԲԱՐՈՆ ՕԳՈՍՏՈՍ ՅՕՆ ԼԱՅՍ ԼԱՌԻՉԵՆԱՅ
ՃԱՆՆԱԳՍԱՐՋՈՒԴՈՒԹՅՈՒՆ
 ՅԱՅՍԿՈՅՍ ԿՈՎԿԱՍՈՒ ԵՅՆ Է
 Ի ԼԱՅՍ ԵՒ Ի ՎԻՐՍ:

Կիտողութիւնք ի վերայ առտին եւ ընկերական կենաց, բարուց եւ սովորութեանց ազգաց, բնակելոց ընդ մէջ Յետ ծովու եւ կասսից:

Լ Ձ Դ .

Յօրէ՛ յորմէ հետէ զհետ եղև Եւրոպա մանրասոյղ հետազօտութեամբք ի քննին հնութեանց ազանց Ասիացոց, յաճատեցին և ի մերս Հայաստան ճանապարհորդք ակամաւորք ամենայն ազգաց Եւրոպոյ, որպիսիք են՝ Գ' Անգլի, Թուրքօր, Թավերնիէ, Հիւլտենշտիտ, Էարտէն, Գիւրաւ սը Մօնպերեօ. Ըվայիէ Գամբա, Բլափրոթ, Բըրօսէ, Համ, Էուլց, Ռիդաէր, Թէքսիէ, Վազնէր, Եւզենիտ, Բօրէ, Էոպն, Լ. Մօնիէ Ճիդլիթ, Անգրէյ Մուրափիեվ, Հակտհաուզեն, և այլք:

Յօտարացդ այտի ի յիշատակելոցդ, կամ ի բաց թողելոցն եղն ոմանք, որք զճնարտութեան անսայթաք պահեալ զհնօս գիտացին ստուգապատում տեղեկութեամբք պսակել զանձանցն քրտանաթօր և տարժանելի ճգունս, և զուսելոյ աշխարհին, զառաքչին իւրեանց՝ զհետաքրքրութիւնիսկ ոմանք, անկարացեալք խորամուխ լինել ի հնութիւնս, յիսկական առիթս և սկզբնաւորութիւնս պատմելոց իրաց, ի բուն բնաւորութիւնս, ծէսս Ազգին, և Կրօնին անաղօտ պարզութիւն, և նախատիպն մաքրութիւն, բանս զըպարտութեան